

**ԹՈՒՐՔԻԱՅԻ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ
ԱՅԺՄԵԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

*Արեստակես Միմավորյան**

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող գլոբալ փոփոխությունները, որոնք անմիջականորեն անդրադառնում են հասարակությունների ու պետականությունների վրա, վերլուծվում և գնահատվում են ոչ միայն ակադեմիական կառույցների կողմից: Դրանով զբաղվում են նաև վերլուծական կենտրոնները, որոնք արևմտյան հասարակությունում ստացել են «*think-tanks*»¹, այլ կերպ՝ «ուղեղային կենտրոն» (ՈւԿ) անվանումը: ՈւԿ-ները գիտահետազոտական կազմակերպություններ են, որոնք իրենց ուշադրությունն ու ողջ աշխատանքային ժամանակը կենտրոնացնում են հումանիտար գիտությունների՝ քաղաքական, տնտեսական, սոցիոլոգիական, իրավական և այլ ոլորտների ուսումնասիրության վրա: Մական, ըստ էության, ՈւԿ ուսումնասիրություններում ներառվում են նաև կրթական, սպորտային, բնապահպանական և ազգային անվտանգության ու հանրային ոլորտներին առնչվող խնդիրները: Հաշվի առնելով նրանց ազդեցությունը հասարակական-քաղաքական, տնտեսական, աշխարհաքաղաքական զարգացումներում՝ ՈւԿ-ները դիտվում են որպես «հինգերորդ իշխանություն» ՋԼՄ-ից հետո: Այս գործընթացներից հետ չի մնացել նաև Թուրքիան, որի արտաքին և ներքին քաղաքականության մեջ ՈւԿ-ների դերը, հատկապես վերջին տարիներին, բավական մեծացել է:

* «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար:

¹ Ինչպես նշում են մի շարք ամերիկյան հեղինակներ՝ «*think-tank*» տերմինը շրջանառության մեջ է դրվել 1940-ական թվականներին, ռազմական ստրատեգ և ամերիկացի տնտեսագետ, 20-րդ դարի հայտնի ֆուտուրոլոգ Հերման Կանի կողմից, տե՛ս *Donald E. Abelson*, Think tanks and U.S. Foreign Policy: as historical view. <http://usinfo.state.gov/journals/itps/1102/ijpe/pj73abelson.htm>:

Հոդվածում փորձ է արվում վերլուծել թուրքական ՈւԿ-ների զարգացման նախադրյալները և ոլորտում առկա հիմնախնդիրները մի պարզ պատճառով. նման կառույցները բավական միջոցներ են ներդնում նաև Հայաստանի հետ հարաբերություններում իրենց ձայնը հասանելի դարձնելու համար: Մինչդեռ համագործակցություն իրականացնող մեր հայրենական ՈւԿ-ները և ՀԿ-ները անտեղյակ են ինչպես Թուրքիայի «*think-tank*»-երին առնչվող հիմնախնդիրներին ու նրանց հնարավորություններին, այնպես էլ նրանց գաղափարաքաղաքական արժեհամակարգին և պատվիրատուներին:

Թուրքիայի վերլուծական կենտրոնների՝ «թինկ-թանկ»-երի (թուրքական անվանումներն են *düşünce kuruluşlar*-մտավոր կառույցներ, *düşünce merkezleri*-մտավոր կենտրոններ, *Stratejik Araştırmalar Merkezi*-Ռազմավարական հետազոտությունների կենտրոն) ծագման ուսումնասիրությունը միայն վերջերս է հայտնվել թուրքական գիտավերլուծական, փորձագիտական հանրության և պետական գերատեսչական կառույցների ուշադրության կենտրոնում: Չանդրադառնալով Թուրքիայի «թինկ-թանկ»-երի առաջացման պատմությանը՝ նշենք, որ «առաջին սերնդի» թուրքական կենտրոններն ի հայտ եկան 1960-ական թվականների սկզբին, ինչը պատճառահետևանքային կապի մեջ էր Թուրքիայի արտաքին և ներքին քաղաքական կյանքում տեղի ունեցող արմատական փոփոխությունների, մասնավորապես՝ Մերձավոր Արևելքում տեղի ունեցող արաբա-իսրայելական պատերազմների, Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումների, ԵՄ-Թուրքիա հարաբերությունների, հետագայում՝ Կիպրոսյան խնդրի հետ:

Թուրքական ՈւԿ-ների առաջացման գործընթացում կարելի է առանձնացնել հետևյալ գործոնները.

1. 1961թ. ընդունված նոր սահմանադրությունը,
2. թուրքական կապիտալի վերելքը,
3. Թուրքիայի կառավարության՝ Եվրոպայի տնտեսական ընկերակցության կառույցի հետ ստորագրած 1963թ. Անկարայի պայմանագիրը,
4. 1960թ. Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումը,
5. Կիպրոսյան խնդիրը:

1950-ական թթ. Թուրքիայում չկային ոչ սահմանադրական, ոչ էլ քաղաքական բավարար նախադրյալներ, որոնք կնպաստեին պետությունից անկախ գործող ՈւԿ ստեղծմանը: Պետությունը բարենպաստ պայմաններ չէր ստեղծում դրանց հիմնադրման և զարգացման համար, քանի որ պետական նշանակության խնդիրների քննարկմամբ, վերլուծությամբ զբաղվում էին ազգային անվտանգության, պաշտպանության նախարարության և արտգործնախարարության հատուկ փակ «անալիտիկ» խմբերը, որոնց աշխատանքը պետության միակ վստահելի աղբյուրն էր: Միայն 1990-ական թվականներին ըմբռնվեց ռազմավարական կենտրոն ունենալու կարևորությունը: Հետագայում Թուրքիայի ինտելեկտուալ խավը գիտակցեց, որ երկրի առջև ծառացած խնդիրները պետությունն ի գործու չէ միայնակ լուծել և գնաց որոշակի փոփոխությունների:

1961թ. ընդունված նոր սահմանադրության մեջ փոփոխություններ կատարվեցին, այդ թվում՝ միությունների կամ հիմնադրամների վերաբերյալ կետում, ինչը որոշակի ազատություն տվեց կառույցների ստեղծման համար: Սրան գուցահեռ՝ ՈւԿ-ների ստեղծման համար նպաստավոր հանգամանք էր նաև Թուրքիայի կառավարության և Եվրոպայի տնտեսական համագործակցություն կառույցի՝ 1963թ. ստորագրած Անկարայի պայմանագիրը [1, s. 51]:

Եվրոպայի հետ տնտեսական համագործակցությունը լայն հնարավորություններ ստեղծեց Թուրքիայի համար. երկրում բարձրացավ տնտեսագիտության ոլորտի մասնագետների և դրան առնչվող գիտելիքի պահանջարկը: Թուրքական գործարար աշխարհը Եվրոպայի տնտեսական դաշտի ուսումնասիրության համար լայնածավալ միջոցառումներ սկսեց անցկացնել, ինչն էլ նպաստեց առաջին հետազոտական կենտրոնների հիմնադրմանը: Գործարար շրջանակների կողմից ստեղծվեցին առաջին կենտրոնները, որոնք, բնականաբար, ունեին տնտեսական և սոցիալական ուղղվածություն. դրանք էին *Տնտեսական և սոցիալական հետազոտությունների կոնֆերանսների պատվիրակությունը* (*Ekonomik ve Sosyal Etütler Konferans Heyeti*), որը 1994թ. վերանվանվեց և ներկայում գործում է *Տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամ* անվամբ (*Türkiye Ekono-*

mik ve Sosyal Etütler Vakf-TESEV), Տնտեսական հետազոտությունների հիմնադրամը (İktisadi Araştırmalar Vakfı) և ամենակարևոր կառույցներից մեկը՝ Տնտեսական զարգացման հիմնադրամը (İktisadi Kalkınma Vakfı-İKV): Այս կառույցները ժամանակին ակտիվ էին գործում, քանի որ քաղաքական զգայուն հարցերից հեռու էին մնում, իսկ պետությունն ամեն ինչ անում էր, որպեսզի ներքին և արտաքին քաղաքականությանը վերաբերող սուր խնդիրներով զբաղվող կառույցներ ի հայտ չգան:

Կիպրոսյան խնդիրն անմիջական ազդեցություն ունեցավ թուրքական պետականության ռազմավարական նոր մտքի ձևավորման վրա և դարձավ առաջին քաղաքական ուղղվածությամբ կենտրոնի՝ *DPE-ի (Dış Politika Enstitüsü* - Արտաքին քաղաքականության ինստիտուտ) ստեղծման հիմնական շարժառիթը: 1974թ. ստեղծված Արտաքին քաղաքականության ինստիտուտի մեկնարկային աշխատանքը սկզբում չխրախուսվեց պետության կողմից: Վերջինս խիստ մոտեցում ուներ արտաքին քաղաքականությանն առնչվող ցանկացած խնդրի և համարում էր, որ նման վերլուծությունները միայն իր և ԱԳՆ խնդիրն են: Այս կենտրոնի ստեղծման հիմք հանդիսացավ «*Foreign Policy*» (Արտաքին քաղաքականություն) ամսագիրը, որը հրատարակվում էր 1971 թվականից:

Կենտրոնի հիմնադրման գործում մեծ էր ԱՄՆ Միջազգային հարաբերությունների խորհրդի (*Council on Foreign Relations, CFR*) դերը, որին մասնակցություն ունեցավ ներկայում գործունեությունը դադարեցրած իտալական հետազոտական մի ինստիտուտ ևս: Վերջիններիս մեթոդաբանական մշակումները ներդրվեցին *DPE* աշխատանքային կանոնադրության մեջ [2, c. 148.]:

Անկարայի նոր դերակատարներն ու ոլորտի հիմնախնդիրները

ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի աշխարհի «ուղեղային կենտրոնների» ուսումնասիրությունների համաձայն՝ այսօր Թուրքիայում ռազմավարական հետազոտություններ է իրականացնում ավելի քան 27 կենտրոն [3, p. 23]: Բայց դրանց թիվն անհամեմատ մեծ է և անցնում է 100-ից: Միևնույն ժամանակ, նշենք, որ ոչ բոլոր կենտրոններն են կարողանում իրենց անվա-

նր համարժեք գործունեություն ծավալել: Մասնավորապես, այն կենտրոնները, որոնք զբաղվում են քաղաքական, սոցիալական, տնտեսական, ռազմական և այլ խնդիրներով, աշխատում են հետազոտական կենտրոնի համբավ ձեռք բերել երկրի ներսում, այլապես բավական արագ հեղինակագրկվում են և «դադարում» գործել: Այդ հանգամանքից և գուցե սեփական մեթոդաբանության չափանիշներից ելնելով՝ ամերիկյան հետազոտողները վերոնշյալ ցանկում չեն ընդգրկել դրանց մեծ մասին նաև իրենց անկայուն գործունեության պատճառով:

Մինչև սոցճամբարի փլուզումը քաղաքական հետազոտություններ իրականացնող տասնյակ վերլուծական կենտրոններ են հիմնվել, սակայն 2002 թվականից սկսած, երբ իշխանության եկավ Արդարություն և զարգացում կուսակցությունը (ԱԶԿ), դրանց թիվն անհամեմատ աճեց՝ ի հայտ բերելով ոլորտի հիմնախնդիրները: Միայն 2000-2011թթ. ընկած ժամանակահատվածում մեկ տարվա կտրվածքով հիմնադրվել են 2-11 կենտրոն, համենայնդեպս, նշված վերջին թիվը դեռ չի գերազանցվել: Վերլուծական կառույցների աճի առկա միտումները կարող են հանգեցնել ակադեմիական շրջանակներից դուրս հումանիտար գիտական մտքի զարգացմանը և նոր որակ հաղորդել քաղաքագիտական-ռազմավարական մշակումներին:

Արտաքին քաղաքականությամբ զբաղվող կենտրոնները, կամա թե ակամա, սկսել են գործել տարբեր գաղափարախոսությունների ազդեցության տակ՝ անկախ նրանից, թե ովքեր են մոտ կանգնած իշխանությանը: Անգամ այն կենտրոնները, որոնք սատարում են տարբեր քաղաքական թևերի, երբեք կուսակցությունների մաս չեն կազմում, եթե, իհարկե, կուսակցություններն իրենք չունեն այդպիսի կենտրոններ: Այս կառույցները, փաստացի, «անկախ» և կիսանկախ ինստիտուտներ են, որոնք իրականացնում են հետազոտություններ, ձեռք բերում գիտելիքներ՝ դրանք կիրառելով գլխավորապես քաղաքական նպատակների իրականացման համար:

Թուրքական վերլուծական կառույցների շարքում բավական մեծ հեղինակություն ունեցող Ռազմավարական հետազոտություններ (USAK) կառույցի ղեկավար Սեդաթ Լաչիները այսպես է բացատրում ՈւԿ ինդուստրիալ զարգացումը. «Համալսարանները չէին կարողանում գնահա-

տական տալ Թուրքիայում տեղի ունեցող ռազմական հեղաշրջումներին և արտաքին քաղաքականության զգայուն հարցերին: Այսօր մեր երկրում ունենք մոտ 50 (°) վերլուծական կառույց: Մենք մեզ անվանում ենք լիբերալներ և հայրենասերներ: Կառավարությունը և ԱԶԿ-ն պահպանում են այն արժեքները, որը մեզ համար ընդունելի է, բայց մենք աջակցում ենք այն քաղաքականությանը, որը համապատասխանում է մեր հայացքներին» [4]:

Եվ իսկապես, համալսարաններում գիտահետազոտական աշխատանքը հաճախ սահմանափակվում է տեսական և մեթոդական խորհրդատվությունների տրամադրումով, ինչը համահունչ չէ իրական քաղաքական զարգացումների, խնդիրների լուծմանը: Մինչդեռ պաշտոնատար անձինք, ընթացիկ քաղաքական խնդիրներում կենտրոնանալու պատճառով, ի վիճակի չեն համակարգել և մշակել այնպիսի արդյունավետ մեթոդներ, որոնք ուղղված կլինեն գլոբալ քաղաքական խնդիրների լուծմանը:

Այսպիսով, թուրքական ՈւԿ-ների բուն գործառույթն է՝ հնարավորինս աջակցել և լրացնել այդ բացը, հանդես գալ գաղափար-առաջարկություններով, մշակել ազգային անվտանգության խնդիրներից բխող տարբեր ոլորտներին ուղղված ռազմավարական ծրագրեր, զարգացում ապահովող տեսլականներ, քաղաքական և ռազմական նշանակության կանխատեսումներ և ամենակարևորը՝ հասցնել դրանք որոշում կայացնողներին, իրագործել դրանք, իսկ նման դժվար գործընթացի հետ օբյեկտիվորեն բախվում է ցանկացած կենտրոն: Նման աճն, իհարկե, չի կարելի վերագրել միայն ակադեմիական կառույցների անարդյունավետ աշխատանքին, առավել ևս, երբ ՈւԿ-ների «վերլուծական արտադրանքի» 95%-ն էլ ի վերջո չի վերածվում խորհրդատվության դեկլարատիվ օղակների համար և մնում է որպես «թափոն»: Սա, թերևս, «թինկ-թանկային» կառույցների «թույլ օղակներից» է: Պետական օղակները մասամբ չէին/չեն ցանկանում օգտվել տարբեր ոլորտներին առնչվող առաջարկություններից՝ համարելով իրենց այդ հարցերի գիտակ, ինչի հետևանքով թինկ-թանկերի մեծ մասը վերածվում է «աշխատել աշխատելու համար» կառույցի: Միևնույն ժամանակ, հնարավոր է, որ այդ առաջարկություններն ամենևին էլ բարձրորակ չեն,

ինչից կարելի է եզրակացնել, որ փորձագիտական հանրույթը խնդիրներ ունի նաև դրանց մատուցման ոլորտում:

Պետություն-ՈւԿ հարաբերությունները

Պետություն-ՈւԿ հարաբերությունները բավական լարված են եղել ընդհուպ մինչև վերջերս: Արևմուտքում, հատկապես ԱՄՆ-ում, վերլուծական կենտրոններն ու փորձագիտական հանրույթը մեծ հաշվով պետական համակարգի մաս են կազմում և ամենագլխավորը՝ նրանց պատվիրատուները որոշում կայացնող կառույցներն են: Նույնը չի կարելի ասել Թուրքիայի դեպքում: Այստեղ ՈւԿ-ները թեև որոշում կայացնողներին մասամբ մոտ են գտնվում, բայց նայնպես, համակարգի մաս չեն կազմում, առաջին հերթին՝ որոշակի անվստահության և մրցակցության պատճառով: Թուրքիայի փորձագիտական հանրույթը չէր կարող չմտահոգվել այս իրավիճակով, բայց և չունեի (այսօր էլ որոշ մասը չունի) պետական համակարգի վրա ազդելու այնպիսի գործիքներ, որոնց միջոցով կվերացնեի գործնական քաղաքականության և ակադեմիական գիտության միջև գոյություն ունեցող խոչընդոտները: Բավական է ասել, որ թուրք հասարակության զգալի հատվածը տեղեկացված չէր և պատկերացում չունեի այս մասնավոր սեկտորի մասին:

Եվ որպեսզի իրենց առաջարկություններով անընդհատ «չզգվեցնեն» պետական կառույցներին, տարբեր գերատեսչություններ նախաձեռնեցին նախարարություններին կից հիմնել կենտրոններ՝ փակելով մասնավոր սեկտորի՝ ՈւԿ-ների և նրանց փորձագետների մուտքը քաղաքական «դղակներ»: Մեր կարծիքով՝ դա քաղաքական սխալ որոշում էր, որն ուշացնում էր իրենց ազդեցության գոտուց դուրս մնացող ՈւԿ-ների զարգացման հեռանկարները: Նախարարություններին կից գործող հետազոտական կենտրոնները չունեին այն մոբիլությունը, ինչ ոչ պետական վերլուծական կառույցները՝ բացառությամբ ԱԳՆ Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի: Պետական վերլուծական կենտրոնների աշխատանքները շրջանառվում էին համակարգի ներսում՝ հանրային շահերը պաշտպանող այլ դերակատարների զրկելով մասնակցությունից: Մի խոսքով՝ վերջիններս չէին դիտարկվում որպես քաղաքական քննարկումները հարստացնող ռեսուրս:

Սակայն այդ միտումը ինչ-որ չափով հաղթահարվեց՝ տեղի տալով նոր իրողությունների: Այդ հաղթահարման, թերևս, ամենակարևոր դրվագը 2003թ. ԱՄՆ բանակի ներխուժումն էր Իրաք, որն էլ զանգվածային քննարկման նյութ դարձավ թուրքական հասարակությունում: Այս ֆոնին առաջին անգամ լսելի դարձավ փորձագետների ձայնը ԶԼՄ-ով և հեռուստատեսությամբ, ինչն ակնհայտորեն առաջ բերեց հասարակության ավելի լայն շերտերի հետաքրքրությունն այդ ոլորտի նկատմամբ և միանգամայն նոր հարաբերություններ մեղիա դաշտի հետ: Կարծում ենք՝ այստեղ մեծ պետք է լինի նաև Թուրքիայի ներկայիս արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուի դերը, չե՞ որ նա քաղաքական հարթակ մուտք գործեց փորձագիտական շրջանակներից (Եվրասիայի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի աշխատակիցն էր):

Նշանակում է՝ պետություն-ՈւԿ հարաբերություններում սառույցը մասամբ հալվում էր, և փոխհամագործակցության հնարավորությունները դառնում են ավելի շոշափելի, ձեռք բերում կիրառական նշանակություն: Օրինակ, այդ հարաբերությունները հետաքրքիր են նաև նրանով, թե, ի վերջո, կենտրոններն են դիմում այս քայլին՝ հետապնդելով որոշակի շահեր, թե պետական համակարգն է փորձում օգտագործել այդ ներուժը: Առկա են երկու հանգամանքն էլ, բայց մեծ մասամբ կենտրոնի ղեկավարներն իրենք են գնում այդ համագործակցությանը, քանի որ դա երբեմն ղեպի քաղաքական իշխանություն տանող միակ դյուրին ճանապարհն է: Պատահական չէ, որ անցյալ տարի Թուրքիայում տեղի ունեցած ընտրություններում Ազգային մեծ ժողովի պատգամավոր ընտրվեց Միջազգային հարաբերությունների և ռազմավարական հետազոտությունների կենտրոնի՝ *TURKSAM* ղեկավար Սինան Օդանը: Ի հավելումն ասվածի նշենք, որ Թուրքիայի ղեկավար այրերի հաճախակի դարձած այցելությունները ՈւԿ-ներ և դրանցում դասախոսություններով հանդես գալը դառնում են ՈւԿ-ների գործունեության անբաժանելի մասը:

Այս ամենը չի նշանակում, թե բոլոր կենտրոնների նկատմամբ պետության վերաբերմունքը բարեհաճ է, միշտ չէ, որ նրանց միջև հարաբերություններն ընթանում են համերաշխության հունով: Տարբեր գաղափա-

բախտական հոսանքների ազդեցության տակ գտնվող կամ այդ ուժերին ծառայող ՈւԿ-ներն ուղղակի հանդես գալով սեփական դիրքերից՝ պետք է հարմարեցնեն իրենց դիրքորոշումը պետական քաղաքականության հետ, այլապես կհայտնվեն հատուկ ծառայությունների տեսադաշտում կամ կդառնան սակավարդյունավետ:

2000-ական թվականները *SAM*-երի (*SAM*-ը Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի թուրքական հապավումն է) ժամանակաշրջան կարելի է համարել: Բոլոր նորակառույց ՈւԿ-ները ձգտում էին հանդես գալ այս անվան տակ. դա գրավիչ էր և նպատակ ուներ ազդել պետության «նյարդերի» վրա: Դա փորձ էր հասկացնելու, որ Թուրքիայի ԱԳՆ *SAM*-ը (հիմն. 1995թ.) միակը չէ, որ կարող է լուծել պետության առջև ծառացած արտաքին և ներքին քաղաքականության զգայուն հարցերը: Արդեն քաղաքական հարթակներից աստիճանական անկում ապրած նախկին պաշտոնաթող դիվանագետներ և գիտական ոլորտի ներկայացուցիչներ, օգտվելով երկրում թափ առած *SAM*-երի հիմնադրման «համաճարակից», ձեռնամուխ եղան սեփական թինկ-թանկեր ստեղծելուն: Եվ մեկը մյուսին կրկնօրինակելով ստեղծվեցին տասնյակ *SAM*-եր, ընդ որում՝ շատերը հաջողություններ գրանցեցին, ինչպես 2008թ. փակված *ASAM*-ը, այսօր մեծ հեղինակություն վայելող *TASAM*-ն ու *ORSAM*-ը և արդեն դիրքերը զիջող *TURKSAM*-ը: Վերջին հաշվով, մնացած կենտրոնները փորձեցին օգտվել այս բումից՝ պետական կարգերի բարեհաճությանն ու հավանությանն արժանանալու համար, մինչդեռ, անձանոթ լինելով ոլորտում տիրող խնդիրներին (հատկապես ֆինանսական) և տեսնելով ԱԳՆ փակ դռներն իրենց առջև, աստիճանաբար զիջեցին դիրքերը նմանատիպ կառույցներին, դադարեցին գործել կամ մնացին որպես «դեղին թինկ-թանկ»-եր, ինչպես հաճախ ասվում է մամուլի պարագայում:

Պետք է նշել, որ դրանք ստեղծվում էին «դիլետանտների» կողմից՝ մարդիկ, որոնք չունեին համապատասխան փորձառություն և գիտելիքներ: Ավելի հաջողակները շոշափելի առավելություններ ունեցան մյուսների նկատմամբ՝ կարողանալով ընդհանուր հետաքրքրություններում փոխհամաձայնության գալ պետական տարբեր օղակների հետ, մինչդեռ դա բավա-

րար չէր քաղաքական կապերի անընդհատությունն ապահովելու համար: Նույնիսկ Թուրքիայի ռազմական ուժերի և Ազգայնական շարժում կուսակցության ակտիվիստների համար նախատեսված, քարոզչական մեծ ապարատի վերածված *ASAM*-ը, որի գլխավոր գենքը Հայկական հետազոտությունների ինստիտուտն (*Ermeni Araştırmaları Enstitüsü*) էր և ներկայանում էր պետության «*soft power*»-ը, դադարեց գործել: Թուրքական ԶԼՄ-ն դա որակեցին որպես ֆինանսական աջակցությունից զրկելու նախադեպ, բայց մի՞թե պետության համար այդչափ կարևորություն ներկայացնող կառույցը չէր կարող ֆինանսական աջակցություն ստանալ վերջինիս կողմից:

Իրականում զինվորականներով համալրված *ASAM*-ը չափազանց քաղաքականացված լինելու պատճառով պատժվեց: Նույն ժամանակահատվածում (2008թ.) միևնույն բախտին արժանացավ մեկ այլ կառույց ևս՝ *TUSAM*-ը (Թուրքիայի ազգային անվտանգության ռազմավարական հետազոտությունների կենտրոն), որը քեմալական եվրասիականության գաղափարախոսության շրջանակներում էր վարում իր քաղաքականությունը, ինչպես և *ASAM*-ը: Երկու կենտրոններն էլ, ի վերջո, քաղաքական հաշվարկներում «սխալներ» էին թույլ տվել՝ փաստացի սատարելով զինվորական վերնախավին, ինչը կարող էր դուր չգալ իշխանության եկած «չափավոր իսլամական» Արդարություն և զարգացում կուսակցությանը, որն այդ կառույցները կարող էր դիտել որպես «հեղափոխականների որջեր»: Դա հաշվեհարդար էր զինվորականների նկատմամբ: Իրականում *TUSAM*-ը դադարեցրեց գործունեությունը «Էրզենեքոնի» գործի շրջանակներում:

Ըստ երևույթին, սա հարված էր Թուրքիայի խոշոր գործարար որոշ շրջանակների շահերին, որոնք մինչ այդ իրենց հովանավորության տակ էին վերցրել մի քանի ՈւԿ: Արդյունքում՝ մի շարք վերլուծական կենտրոններ զրկվեցին այդքան անհրաժեշտ ֆինանսական հոսքերից: Սա ազդանշան էր երկու կողմերի համար էլ՝ լինել պետության հետ կամ ընդհանրապես չլինել, իր հերթին վտանգավոր ճեղքեր առաջացնելով բիզնես էլիտափորձագիտական հանրույթ հարաբերություններում:

Կադրային քաղաքականությունը

Պետություն-«*think-tank*» հարաբերություններից հետո հաջորդ հարցը մրցակցության դիմակայության խնդիրն է, որը կարևոր նշանակություն ունեցավ շատ ու շատ կենտրոնների համար: Կադրերի հարցում մրցավազքի մեջ մտած ՈւԿ-ներն ակամա բախվեցին ոլորտին բնորոշ մի շարք խնդիրների: Թուրքիայի «թինկ-թանկային» քարտեզից հատկապես քաղաքական ուղղվածություն ունեցող կառույցների անհետացումը պայմանավորված չէր միայն պետական միջամտությամբ: Բանն այն է, որ փորձագիտությունն, ըստ էության, մասնագիտություն չէ, և կենտրոնների թվի աճին զուգընթաց՝ հրատապ դարձավ «ինտելեկտուալ ռեսուրսներով» ապահովվելու խնդիրը: Այստեղ կազմակերպչական թերացումներ կային, աչքի էր զարնում նաև ինտելեկտուալ բազայի բացակայությունը: Քանի որ կադրային ընտրության հնարավորությունները խիստ սահմանափակ էին, այն լրացվում էր ի հաշիվ տարբեր քաղաքական կառույցներից, համալսարանական շրջանակներից դուրս եկած՝ տարբեր ոլորտներում հետազոտություններ կատարող երիտասարդ կադրերով և արդեն կարիերան ավարտած քաղաքական գործիչներով, պաշտոնաթող զինվորականներով ու դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներով: Այստեղ ավելորդ չէ հիշատակել ամերիկացի քաղաքագետ Ուոլթեր Լաքերի այն տեսակետը, թե «ուղեղային կենտրոններում» աշխատելու են գնում կամ կարիերայի սկզբում, կամ այն ավարտելուց հետո, ինչպես Հենրի Քիսինջերը և Զբիգնև Բժեզինսկին¹: Ինչ-որ առումով թուրքական կադրերի ընտրության հարցն ընթանում է այս տեսակետին համահունչ:

Նկատվում էր ռազմական, պաշտպանական համակարգի աշխատակիցների ներհուսք դեպի ոչ պետական ՈւԿ-ներ, որն ուներ խորքային պատճառներ: Մինչ օրս էլ պետության «ուժեղ ձեռքը» կենտրոնները ներսից վերահսկելու և աշխատանքները «ճիշտ կազմակերպելու» միջոցներ է ձեռնարկում: Կենտրոնների ազատության հակազդումը դարձել է ոչ միայն ոլորտի անբաժանելի մասը, այլև տարիների ընթացքում հղկվել և ձեռք է բերել որոշակի ձևաչափ: Այսինքն՝ կենտրոններն աստիճանաբար կախվա-

¹ Уолтер Лакер, Интеллектуалы и политика, <http://www.russ.ru/Mirovaya-povestka/Intellektualy-i-politika>

ծության մեջ են հայտնվում՝ դառնալով «ռազմական խունտայի» փաստացի կամակատարը, որտեղ քաղաքացիական աշխատանքային իրավունքներին փոխարինելու է գալիս զինվորական կանոնադրությունը:

ՈւԿ-ների առատության պայմաններում սակավ մտավոր ռեսուրսները «սեփականելու» քաղաքականությունը դարձավ մի քանիսի մենաշնորհը, ինչից զրկված որոշ կենտրոններ ակամա հայտնվեցին ծուղակում և չդիմացան մրցակցությանը: Ավելի շրջահայաց կենտրոններն օգտվեցին թուրքական «սփյուռքի» գիտական-փորձագիտական ռեսուրսներից՝ նպաստելով նաև միջազգային կապերի հաստատմանն արտերկրի նույնանման կառույցների հետ:

Փորձագետների մեծ մասն իր պոտենցիալը «ծախսում» և կենտրոնացնում է տարածաշրջանային այնպիսի հարցերի վրա, ինչպիսիք են Մերձավոր Արևելքը, Բալկանները, ԵՄ-Թուրքիա հարաբերություններն ու Կիպրոսյան խնդիրը, ինչից կարելի է ենթադրել, որ Թուրքիայի ներկա իշխանությունների համար հիշյալ հարցերն արտաքին քաղաքականության անքակտելի մասն են: Կենտրոնների նման մոտեցումը բացառապես նպատակ ունի մոտ լինել իշխանությանը, սիրաշահել և հանդես գալ որպես պետության արտաքին քաղաքական գործընթացների «պաշտպան» և այդպիսով լուծել նաև սեփական կառույցի գոյատևման խնդիրը: Այսօրինակ գործընթացը կենտրոնին զրկում է անկախ կարգավիճակից և դարձնում կախյալ՝ մինչև ժամանակ նրան վտանգավոր իրավիճակի մեջ դնելով:

Շատ կենտրոններ (օրինակ՝ 1974թ. հիմնադրված Արտաքին քաղաքականության ինստիտուտը) վերածվեցին Բիլքենտի և այլ համալսարանների ենթակայության տակ գործող կենտրոնների: Սովորաբար սեփական նախաձեռնությամբ համալսարանների ենթակայության տակ անցնում են այն կենտրոնները, որոնք մի քանի տարի գործելուց հետո սկսում են կորցնել իրենց հաստատուն դիրքերը նմանատիպ կառույցների կողքին (շատ դեպքերում ոչ ճիշտ աշխատանքային կազմակերպման, ոչ ակտուալ թեմաների ուսումնասիրության և սուղ ֆինանսական միջոցների պատճառով) և նախընտրում են իրենց «ինտելեկտուալ ռեսուրսների» վերարտադրման գործում ապավինել համալսարաններին: Հատկապես ֆոնդային

բուհերի համար սա ընդունված կարգ է, այն շահավետ «գործարք» է դառնում՝ բարձրացնելով համալսարանների վարկանիշը. պատրաստի գիտական կադրերը ներգրավվում են կենտրոնների աշխատանքներում կամ հակառակը՝ ոչ հայտնի կենտրոնները ճանաչում ունեցող համալսարանների միջոցով փորձում են ամրապնդել իրենց հեղինակությունը: Բայց նույնիսկ այս պարագայում աշխատանքներն ուսումնասիրում են ոչ այնքան պետական առաջնահերթ խնդիրները, որքան ավելի շատ հիշեցնում են ռեֆերատներ կամ դիպլոմային աշխատանքներ: Նման մեթոդիկան աստիճանաբար ՈւԿ-ն հեռացնում է իր առանցքային խնդիրներից: Այն դառնում է «հարմարվող», փոխակերպվում է «ամբիոնի» կամ որևէ «ուսումնասիրող բաժնի»՝ իր գործունեությամբ դառնալով սակավարդյունավետ:

ՈւԿ-ների առատության պայմաններում, սակայն, կադրային բազան բավարար չէ տնտեսական, քաղաքական, կրոնական, տարածաշրջանային հետազոտությունների իրականացման համար: Օտար լեզուներին տիրապետող կադրերի բացակայությունը խոցելի է դարձնում հատկապես տարածաշրջանային բլոկը. ռուսերեն, հայերեն, հունարեն և արաբերեն լեզուների պահանջարկը բավական մեծ է, և անհրաժեշտ թվով մասնագետներով համալրելու փորձերը գնահատվում են ոչ բավարար¹: Համենայնդեպս, ինտելեկտուալ ռեսուրսներ «արտադրելը», «աճեցնելը» և ֆինանսական հնարավորությունների սղությունը դեռևս խնդիր են հանդիսանում ոլորտի համար:

ESAM-ը, մեծ քաղաքականությունը և ռազմավարական միտքը

Իր վարած քաղաքականությամբ իշխանությանն ավելի մոտ գտնված և իր ռազմավարական մտքի արտադրանքով շատերի ուշադրությունը գրաված կենտրոններից է 1969թ. Անկարայում հիմնադրված *Տնտեսական և սոցիա-*

¹ Հետաքրքիր են *TEPAV* (Թուրքիայի տնտեսական քաղաքականության հետազոտությունների հիմնադրամ) տնօրեն Գյուլեն Սաքի հետևյալ պարզաբանումները. «Հայկական հետազոտությունների թեման այսօր, ավելի քան երբևէ, արդիական է, սակայն չունենք մեկ կենտրոն, որը կարող է սովորեցնել հայերեն»: Իսկ Բահչեշեհրի համալսարանի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի նախագահ Էրջան Չիթլիօղլուն, ՈւԿ-ների ներքին խնդիրներին անդրադառնալիս, ավելի հրատապ է համարում կենտրոնների մասնագետների պատրաստման հարցը և նշում. «Այսօր մերձավորարևելյան երկրների խնդիրներն ուսումնասիրող մասնագետները բացարձակապես չեն տիրապետում արաբերենին, անգամ Կովկասի գծով փորձագետները ռուսերեն չգիտեն, այդպես հնարավոր չէ»: Տարբեր ղեկավարներ իրենց հարցազրույցներում անդրադարձել են օտար լեզուների իմացությամբ մասնագետներ չունենալու խնդրին: Տե՛ս *Muhsin Öztürk, Mesut Çevikalp, Ankara'nın yeni aktörleri, Aksiyon dergisi, Sayı: 715, 18.08.2008:*

լական հետազոտությունների կենտրոնը՝ ESAM-ը (*Ekonomik ve Sosyal Araştırmalar Merkezi*): Առաջինը հիմնադրված կենտրոնից՝ *Տնտեսական զարգացման հիմնադրամից* (*İktisadi Kalkınma Vakfı-İKV*) ESAM-ը տարբերվում էր նրանով, որ վերջինիս ստեղծման մեջ ներգրավված էին թուրք հայտնի քաղաքական գործիչներ, մի խումբ ճանաչված տեխնոկրատներ և գիտնականներ: Սա լուրջ քայլ էր, քանի որ վերլուծական կառույցների ստեղծման հանդեպ հետաքրքրություն ցուցաբերեցին հանրության միանգամից երեք շերտերի ներկայացուցիչներ: Չնայած ESAM-ը երկրորդ ՈւԿ-ն էր, այդուհանդերձ, համարվում է Թուրքիայի առաջին մտավոր և ռազմավարական «միտք արտադրող» կենտրոնը: Ընդհանրապես, 1960-90-ականներին ստեղծված կենտրոններից շատերն են համարում, թե իրենք են առաջինը հիմնադրված ՈւԿ-ն: Սա խոսում է այն մասին, որ թուրքական վերլուծական կառույցներն ուսումնասիրող մասնագետներն առայսօր չեն կարողանում հստակ պատասխանել, թե որն է առաջին ՈւԿ-ն: Այս կենտրոնը սկզբից նեթ թարմ մտածողություն բերեց դեռ ձևավորման փուլում գտնվող ՈւԿ-ների ոլորտում: Թուրքիայի արտաքին և ներքին քաղաքական գործընթացների համար հանդես եկավ նոր, այլընտրանքային, բավական հավակնոտ բանաձևերով, որոնք երկար տարիների մշակումներից հետո մասամբ իրականացվեցին ի հաշիվ քաղաքական կապերի:

ESAM-ը սկզբում ակտիվորեն համագործակցում էր նախարարների, պատգամավորների, քաղաքական տարբեր կուսակցությունների ներկայացուցիչների, բյուրոկրատների, գիտական և գործարար շրջանակների հետ, ինչն առայսօր շարունակվում է: 1970-ականների սկզբին կենտրոնի կայացումը կապվում էր երկրի քաղաքական թատերաբեմ մուտք գործած այնպիսի առանցքային գործչի հետ, ինչպիսին էր 1996-1997թթ. Թուրքիայի վարչապետ, Ազգային տեսակետ (*Milli Görüş*¹) հայեցակարգի առաջամարտիկ², իսլամական կողմնորոշում ունեցող Ազգային կարգի կուսակցության

¹ Ազգային տեսակետի հիմքում ընկած են հինգ սյուներ՝ երկրի ներքին խաղաղությունը, պետություն-ազգ միասնությունը, «Մեծ Թուրքիայի» վերածնունդը, հոգևոր և տնտեսական վերելքը:

² Ազգային տեսակետի (*Milli Görüş*) հիմնադիրն է Իսթենդերփաշա մզկիթի իմամ Մեհմեդ Չահիդ Քոթլուն: Քոթլուն համարվում է նաև այն հայեցակարգի հիմնադիրը, որը 1960-90-ական թթ. ընթացքում երկրում քաղաքական իսլամի հիմնադրման ու վերելքի համար ծառայեց որպես առանցքային գաղափարախոսություն, տե՛ս, Վ. Տեր-Մաթևոսյան, Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, Երևան, 2008, էջ 40:

(*Milli Nizam Partisi*) հիմնադիր Նեջմեթին Էրբաքանը (1926-2011թթ.): Էրբաքանին են վերագրում հետևյալ միտքը, թե «*ESAM-ը կփոխի այն փոթորիկների ուղղությունը, որ դժբախտություններ է բերում մարդկությանը*»¹: 1970-ական թվականներին Թուրքիայի քաղաքական օրակարգում մեծ տեղ էր զբաղեցնում Ազգային տեսակետ շարժումը, որին իր նպաստը բերեց նաև այդ ամենին մոտ կանգնած *ESAM-ը*՝ մասնակցելով այդ շարժման նախաձեռնած *Ազգային ինդուստրիալացման ռազմավարության (Milli Sanayileşme Stratejisi)* ծրագրի շրջանակներում իրականացված համաժողովներին, 1980-ականներին նույն շարժման կողմից իրականացված՝ «Արդար համակարգ» անվանումը կրող ծրագրին:

ESAM-ն ունի իսլամական կողմնորոշում, սերտ հարաբերություններ ունի մի շարք իսլամական կազմակերպությունների՝ Իսլամական երկրների վիճակագրական, տնտեսական և սոցիալական հետազոտությունների և ուսուցման կենտրոնի (*The Statistical, Economic and Social Research and Training Centre for Islamic Countries (SESRIC)*), ինչպես նաև Իսլամական համագործակցության կազմակերպություն (*Organisation of Islamic Cooperation (OIC)*) միջազգային կառույցի հետ:

Քաղաքական տեսանկյունից 1990-ականներից հետո նրա ամենախոշոր ձեռքբերումն արդյունավետ համագործակցությունն էր *D-8* կազմակերպության հետ: Այդ կազմակերպության սաղմնավորման առաջին փուլում այն մեծ դերակատարում էր ունեցել: *D-8* կազմակերպությունը կամ, ինչպես ընդունված է անվանել՝ «իսլամական ութնյակը» կամ «զարգացող ութնյակը», ընդգրկում է Թուրքիան, Իրանը, Պակիստանը, Բանգլադեշը, Մալայզիան, Ինդոնեզիան, Եգիպտոսը և Նիգերիան: Այս կառույցը հիմնադրվեց 1997թ. հուլիսի 15-ին, Ստամբուլում՝ Թուրքիայի այն ժամանակվա վարչապետ Նեջմեթին Էրբաքանի նախաձեռնությամբ: Չմանրամասնելով *D-8* կազմակերպության գործառույթները՝ նշենք, որ վերջինիս հետ համագործակցության եզրեր գտած *ESAM-ը* պարտական է միմիայն Էրբաքանին, քանի որ *D-8-ի* միջոցով բարձրացավ նրա հեղինակությունը: Ավելին՝ այն մտավ մեծ քաղաքականություն, իսկ նման հաջողության

¹ <http://esam.org.tr/>, Տնտեսական և սոցիալական հետազոտությունների կենտրոնի պաշտոնական կայքը:

հասել են քիչ թվով կենտրոններ: Ավելորդ չէ նշել, որ D-8-ը թեև վերջին տարիներին մեծ դերակատարում չունի միջազգային ասպարեզում, սակայն արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուն իր «*Խորքային ռազմավարություն: Թուրքիայի միջազգային դիրքը*» ստվարածավալ աշխատությունում գտնում է, որ այն մնում է Թուրքիայի արտաքին քաղաքականության ռազմավարական «գործիքներից» մեկը [5, s. 265]:

Այդուհանդերձ, ի՞նչ նպատակներ է հետապնդում *ESAM*-ը և ո՞րն է նրա «առաքելությունը»: Կենտրոնն իր աշխատանքը կառուցում է երկու առանցքային, հավակնոտ գաղափարների վրա՝ կրկին մեծ Թուրքիայի ստեղծում (*“Yeniden büyük Türkiye’nin” kurulması*), ինչն արդեն խոսում է, որ այն ավելի շատ հիշեցնում է հետդարձ դեպի անցյալ, այսինքն՝ օսմանականության գիրկ, և նոր աշխարհակարգի ստեղծում (*“Yeni bir dünya’nın” kurulması*):

Նոր մեծ Թուրքիայի ստեղծման համար *ESAM*-ը առաջ էր քաշում 4 կարևորագույն դրույթ՝

1. Բարոյականություն և հոգեկան նկարագիր
2. Անձնավորված արտաքին քաղաքականություն
3. Առաջնորդ երկրի զարգացման մոդել, տնտեսության խնդիրների ազգային լուծում
4. Երկիր մոլորակի վրա տեղի ունեցող հանրային անկարգությունների (խռովությունների) կանխարգելում, աշխատել հանուն Թուրքիայի և համայն մարդկության:

Նոր աշխարհակարգի ստեղծումը ենթադրում էր վերոհիշյալին հաջորդող այլ քայլեր: Եթե մեծ Թուրքիայի հաջողության համար պահանջվում էին որոշ դեպքերում գլոբալ փոփոխություններ, ապա այս դեպքում *ESAM*-ը, հավատարիմ մնալով Էրբաքանի գաղափարախոսությանը, գտնում էր, որ նոր աշխարհակարգը պետք է ստեղծվի 5 առանցքային գաղափարական նպատակների շուրջ՝ Թուրքիան դիտելով որպես առաջնորդ և մոդել երկիր: Այդ հինգ հիմնատարքերը կարելի է բնորոշել որպես «իսլամական նպատակներ».

1. Իսլամական միավորված ազգեր (կազմակերպություն)
2. Ընդհանուր իսլամական դրամական միավոր
3. Ընդհանուր իսլամական շուկա

4. Իսլամական ՆԱՏՕ

5. Իսլամական ՅՈՒՆԵՍԿՕ

Ահա այսպիսի նոր գաղափարներով էլ *ESAM*-ը մուտք գործեց թուրքական քաղաքական միջավայր, բայց գործադրած բոլոր ջանքերը սահմանափակվեցին D-8-ի ստեղծման մեջ թողած հետքով: «Նոր աշխարհակարգ» և «Նոր Մեծ Թուրքիա» գաղափարներն ակնհայտորեն տեղ չգտան Թուրքիայի արտաքին քաղաքականության գործընթացներում, քանզի քեմալական Թուրքիայի պաշտպանները՝ ռազմական վերնախավը, կասեցրին Էրբաքանի քաղաքական գործունեությունը: Անշուշտ, վերջինս ձգտում էր իրականացնել այն ամենը, ինչն անձնապես և իր համախոհների հետ համատեղ մշակվել էր *ESAM*-ում: Ներկայում կենտրոնն առանձնապես չի շեղվել այդ գաղափարներից, այն ղեկավարում է սիմբիոզ գաղափարախոսություններով (իսլամական, պահպանողական և Ազգային տեսակետ) առաջնորդվող «Սաադեթ» կուսակցության հիմնադիր Ռեջայի Քուրթանը՝ փաստացի շարունակելով Էրբաքանի թեզերի իրականացումը:

Հավելենք, որ համաշխարհային մակարդակով 2000 թվականից սկսվում է ՈւԿ-ների տարեկան աճի ցուցանիշի կտրուկ անկում, և 2004թ. այն հավասարվում է անցյալ դարի կեսերին բնորոշ մեծություններին: Դա, ըստ փորձագետների, կապված է ՈւԿ շուկայի բնական «գերհագեցման» հետ [6, էջ 10]: Մինչդեռ Թուրքիայում 2004 թվականից ի վեր անընդհատ աճում է քաղաքական հետազոտություններով զբաղվող կառույցների թիվը:

Գալով մեզ՝ պետք է գիտակցենք, որ թուրքական վերլուծական շրջանակներից սերած ներկայիս արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուն բարձր է գնահատում այս կառույցների դերը երկրի ներքին և արտաքին քաղաքականության զարգացումներում, դրանք ծառայեցնելով որպես այլընտրանքային «ղիպկորպուս»՝ վերջիններիս միջոցով վարում է Թուրքիա-Հայաստան հարաբերություններում սեփական դիրքորոշումներն առաջ մղելու քաղաքականություն: Նման պայմաններում Հայաստանի գիտական և հատկապես փորձագիտական հանրույթը մշտապես բախվելու է այս կառույցների՝ թուրքական պետության կողմից հրամցված տեսակետներին, առաջարկվող այս կամ այն քաղաքական բանաձևերին: Նման պայմանները մեզ թելադրում են համախմբել

ՀՀ և Միջուրքի առկա գիտական, փորձագիտական մտավոր ռեսուրսները, ինչը թույլ կտա Հայության առջև ծառացած ռազմավարական նշանակության ցանկացած հարցում կարծիքների և տեսակետների փոխանակման միջոցով ձևավորել ընդհանուր մոտեցում՝ թուրքական «հինգերորդ իշխանության» քայլերին դիմագրավելու համար:

Մեպտեմբեր, 2012թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Bülent Aras, Şule Toktaş, Ümit Kurt*, Araştırma Merkezlerinin Yükselişi. Türkiye'de Dış Politika ve Ulusal Güvenlik Kültürü, Ankara, 2010.
2. *С.В. Кизюков*, Внешнеполитические концепции республиканской Турции, Бишкек, 2006.
3. The Global “Go-to Think-thanks” 2010, Philadelphia, PA USA, 2011.
4. *Wendy Kristianasen*, Les think tanks turcs, agents du changement, Le Monde diplomatique, Février 2010:
5. *Ahmet Davutoğlu*, Stratejik Derinlik, Türkiye'nin Uluslararası Konumu, Istanbul, Küre Yayınlan, 2001.
6. *Գազիկ Հարությունյան*, «Ուղեղային կենտրոնները» և ազգային անվտանգությունը, 21-րդ դար, թիվ 1(35), 2011:

ПРЕДПОСЫЛКИ РАЗВИТИЯ ТУРЕЦКИХ МОЗГОВЫХ ЦЕНТРОВ: ТЕКУЩИЕ ЗАДАЧИ

Арестакес Симаворян

Резюме

Статья посвящена анализу развития современных турецких мозговых центров. В качестве предпосылок их развития выделен ряд геополитических и экономических факторов. Показывается, что история турецких мозговых центров насчитывает десятилетия, и сегодня они считаются субъектами, оказывающими определенное влияние на реальную политику. Этим обусловлен интерес, в последние годы выказываемый к ним госструктурами. В статье затрагиваются темы взаимоотношений «мозговые центры – государство», кадровых вопросов и интеллектуальной «продукции».